Դեպոզիտային պահատուփերի վարձակալության և սպասարկման պայմաններ*

Դրույքաչափ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ			
Պահատվության ժամկետը	**Փոքր** (80մմ*180մմ*450մմ, 750մմ*255մմ*425մմ, 50մմ*310մմ*435մմ, 75մմ*310մմ*435մմ)	**Միջին** (155մմ*255մմ*425մմ, 125մմ*310մմ*435մմ, 175մմ*310մմ*435մմ)	**Մեծ** (180մմ*420մմ*450մմ, 155մմ*550մմ*425մմ, 200մմ*620մմ*435մմ, 525մմ*620մմ*435մմ)
1-7 օր	3,000.00	4,000.00	5,000.00
8-14 օր	5,000.00	6,000.00	7,000.00
15-30 օր	7,500.00	8,500.00	9,500.00
31-90 օր	15,000.00	18,000.00	20,000.00
91-180 օր	22,000.00	25,000.00	30,000.00
181-270 օր	25,000.00	28,000.00	32,000.00
271-365 օր	29,000.00	33,000.00	39,000.00

1. Ծառայությունը մատուցվում է հաշվետեր հաճախորդներին՝ անհատական պահատեղերով կահավորված մասնաճյուղերում (ՀՍՎ):

2. Հաճախորդի կողմից անհատական պահատեղի բանալու կորստի հետևանքով բանալու կրկնօրինակի պատրաստման կամ անհատական պահատեղի վերանորոգման համար

Բանկի կրած ծախսերը հատուցում է հաճախորդը, ընդ որում. Հաճախորդին տրամադրված զույգ բանալիներից մեկը կորցնելու դեպքում գանձվում է 15,000 ՀՀ դրամ, Հաճախորդին տրամադրված զույգ բանալիներից երկուսն էլ կորցնելու կամ պահատեղի կողպեքը վնասելու դեպքում գանձվում է 50,000 ՀՀ դրամ:

3. Վարձակալության պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո անհատական պահատեղը հաճախորդի կողմից չազատելու դեպքում վարձակալության պայմանագիրը շարունակում է գործել՝ Բանկի կողմից յուրաքանչյուր անգամ անակցեպտ երկարաձգվելով սկզբնական պայմանագրի ժամկետով: Ընդ որում, երկարաձգման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաճախորդի հաշվից(ներից) գանձվում է վճար՝ երկարաձգման օրվա դրությամբ հրապարակված սակագնին համապատասխան: Նշված եղանակով երկարաձգումները կատարվում են այնքան մինչև հաճախորդի հաշվին(ներին) առկա գումարը բավարարում է սակագինը գանձելու համար, հակառակ դեպքում ոչ ավել քան 1(մեկ) տարի:

4. Բանկը սույն պայմանների 2-րդ և 3-րդ կետով նախատեսված ծախսերը անակցեպտ կերպով գանձում է Հաճախորդի հաշվում(ներում) առկա դրամական միջոցներից՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժույթների փոխարկում Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

5. Սույն պայմանների 3-րդ կետով նախատեսված 1(մեկ) տարին լրանալուց հետո հաճախորդի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից անհատական պահատեղը չազատելու դեպքում Բանկը իրեն իրավունք է վերապահում առանց հաճախորդի ներկայության և/կամ լրացուցիչ թույլտվության բացելու պահատեղը, պահատեղում արժեքների առկայության դեպքում դրանք:

* Ոչ ռեզիդենտ Հաճախորդներից գանձվում է սահմանված սակագների կրկնապատիկը: